ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արարատի քաղաքային համայնք,
ք. Արարատ, Շահումյան 34, հեռ. /0238/4-47-47, էլ. փոստ՝ ararat.ararat@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ
<<23>> ՆՈՅԵՄԲԵՐ 2018 թվականի N 42

ԱՐԱՐԱՏ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետի պահանջներով

ԱՐԱՐԱՏ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ

ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հաստատել համայնքի ավագանու նիստի օրակարգը.

1. ԱՐԱՐԱՏ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2018Թ. ԲՅՈՒՋԵԻ ՀՈԴՎԱԾՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Հարցը ներկայացնում է՝ ֆինտնտ և գանձումների բաժնի պետ Լ. Հովհաննիսյանը/

2. ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԵՐԻ ՀՐԱՎԻՐՄԱՆ 2019թ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Հարցը ներկայացնում է աշխատակազմի քարտուղար Կ. Մելքոնյանը/

3. ԱՐԱՐԱՏ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ԹԻՎ 1, 2 ԵՎ 3 ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ ՀՈԱԿ-ՆԵՐ ՀԱՃԱԽՈՂ ԵՐԵԽԱՆԵՐԻ 2019Թ. ՀԱՄԱՐ ԳԱՆՁՎՈՂ ԾՆՈՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

/Հարցը ներկայացնում է համայնքի ղեկավարի խորհրդական Բ. Բաբայանը/

4. <<ՂԱԶԱՐՈՍ ՍԱՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ-ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԱՐՎԵՍՏԻ ԴՊՐՈՑ>> ՀՈԱԿ ՀԱՃԱԽՈՂ ՍԱՆԵՐԻ 2019Թ. ՀԱՄԱՐ ԳԱՆՁՎՈՂ ԾՆՈՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

/Հարցը ներկայացնում է համայնքի ղեկավարի խորհրդական Բ. Բաբայանը/

5. ԱՐԱՐԱՏ ՔԱՂԱՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ԲՆԱԿԵԼԻ ՇԵՆՔԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺՆԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՊԱՐՏԱԴԻՐ ՆՈՐՄԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄՆ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ 2019թ. ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՎՃԱՐՆԵՐԻ ՉԱՓԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Հարցը ներկայացնում է համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Կ. Մելքոնյանը /

6. ԱՐԱՐԱՏԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2019 Թ. ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԻ ՄԱՍԻՆ

/Հարցը ներկայացնում է՝ ֆինտնտ և գանձումների բաժնի պետ Լ. Հովհաննիսյանը/

7. 2019Թ. ՀԱՄԱՐ ԱՐԱՐԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ, ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Հարցը ներկայացնում է աշխատակազմի քարտուղար Կ. Մելքոնյանը/

8. 2019Թ. ՀԱՄԱՐ «ԱՐԱՐԱՏ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԿՈՄՈՒՆԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ» ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Հարցը ներկայացնում է աշխատակազմի քարտուղար Կ. Մելքոնյանը/

9. ԱՐԱՐԱՏ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2019Թ. ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Հարցը ներկայացնում է համայնքապետարանի ֆինանսական և գանձումների բաժնի պետի տեղակալ Հ. Պողոսյանը/

10. ԱՐԱՐԱՏ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ ՍԱՍՈՒՆ ԴԱԴԱՄՅԱՆԻ ԵՎ ՄԱՅԻՍ ՆԱԴԱՐՅԱՆԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Հարցը ներկայացնում է աշխատակազմի քարտուղար Կ. Մելքոնյանը/

11. ՔԱՂԱՔԱՅԻ ԳԱՌՆԻԿ ՊԱՅՏԱՐՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԸ՝ ԱՌԵՎՏՐԻ ՍՐԱՀԻ ԸՆԴԼԱՅՆՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՏԱՐԱԾՔ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Հարցը ներկայացնում է՝ աշխատակազմի գլխավոր մասնագետ Հ. Դավթյանը/

ԿՈՂՄ (9)

ավագանու անդամներ՝

1. ԱԶԱՏ ՀԱԿՈԲՅԱՆ
2. ԱՆԴՐԱՆԻԿ ՓԱՆՈՍՅԱՆ
3. ԱԼԵՔՍԱՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ
4. ԱՆԴՐԵՅ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
5. ԱՐՍԵՆ ՀԱԿՈԲՅԱՆ
6. ԳՈՀԱՐԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
7. ԶԻՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
8. ՀԱՅԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ
9. ՌՈՄԱ ԱՌՈՒՍՏԱՄՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ՝ ՀԱՅԿ ՀԱՅԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արարատի քաղաքային համայնք,
ք. Արարատ, Շահումյան 34, հեռ. /0238/4-47-47, էլ. փոստ՝ ararat.ararat@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ
<<23>> ՆՈՅԵՄԲԵՐ 2018 թվականի N 43-Ն

ԱՐԱՐԱՏ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2018Թ. ԲՅՈՒՋԵԻ ՀՈԴՎԱԾՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով «Արարատի կոմունալ ծառայություն» ԲՀ «ԳԱԶ 3309 ԱՕ 440» մակնիշի 267 ԼԼ 26 պետհամարանիշի աղբատար ավտոմեքենայի և տրակտորի համար նոր շարժիչների, գազի սարքավորումների ձեռքբերման, աղբարկղերի պատրաստման, «Արարատ քաղաքի թիվ 2 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի ցանկապատի կառուցման և տեղադրման, Արարատ քաղաքի ճանապարհային նշանների տարատեղման և գծանշման սխեմաների պատրաստման նախագծային փաստաթղթերի կազմման անհրաժեշտությունը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 5րդ, 38-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետի պահանջներով, ինչպես նաև համայնքի ավագանու կանոնակարգով

ԱՐԱՐԱՏ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ

ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հաստատել համայնքի 2018թ. բյուջեի հոդվածներում կատարված հետևյալ փոփոխությունները.

1. Պակասեցնել՝

1) 0451.51 «Ճանապարհային տրանսպորտ» ծրագրի 5113 «Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում» հոդվածը 4350,0 հազ. դրամ, սահմանելով վերջինիս ծախսային պլանը 89258,654.3հազ. դրամ:

Սահմանել ծրագրի ծախսային պլանը 91836,654.3 հազ. դրամ:

Ավելացնել.

1. 0661.51 «Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություններ» ծրագրի

ա) 5112 «Շենքերի և շինությունների կառուցում» հոդվածը 1700,0 հազ. դրամ, սահմանելով վերջինիս ծախսային պլանը 2650,0 հազ. դրամ,

բ) 5129 «Այլ մեքենաներ և սարքավորումներ» հոդվածը 1100,0 հազ. դրամ, սահմանելով վերջինիս ծախսային պլանը 1700,0 հազ. դրամ: Սահմանել ծրագրի ծախսային պլանը 121065,0 հազ. դրամ:

3. Ավելացնել՝

0911.51 «Նախադպրոցական կրթություն» ծրագրի 5112 «Շենքերի և շինությունների կառուցում» հոդվածը 700,0 հազ. դրամ, սահմանելով վերջինիս ծախսային պլանը 700,0 հազ. դրամ, իսկ ծրագրի ծախսային պլանը սահմանել 126391,0 հազ. դրամ:

4. Ավելացնել՝

0451.59 «Փողոցների պահպանում և շահագործում» ծրագրի 5134

«Նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմում» հոդվածը 850,0 հազ. դրամ, սահմանելով վերջինիս ծախսային պլանը 900,0 հազ. դրամ, իսկ ծրագրի ծախսային պլանը սահմանել 2391,0 հազ. դրամ:

5. Համայնքի ղեկավարին՝ կազմել նոր նախահաշիվներ և ժամանակացույցեր:

ԿՈՂՄ՝ (7)

ավագանու անդամներ՝

1. ԱԶԱՏ ՀԱԿՈԲՅԱՆ
2. ԱՆԴՐԱՆԻԿ ՓԱՆՈՍՅԱՆ
3. ԱՆԴՐԵՅ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
4. ԱՐՍԵՆ ՀԱԿՈԲՅԱՆ
5. ԳՈՀԱՐԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
6. ԶԻՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
7. ՌՈՄԱ ԱՌՈՒՍՏԱՄՅԱՆ

ԶԵՌՆՊԱՀ (2)

1. ԱԼԵՔՍԱՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ
2. ՀԱՅԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ՝ ՀԱՅԿ ՀԱՅԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արարատի քաղաքային համայնք,
ք. Արարատ, Շահումյան 34, հեռ. /0238/4-47-47, էլ. փոստ՝ ararat.ararat@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ
<<23>> ՆՈՅԵՄԲԵՐ 2018 թվականի N 44

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԵՐԻ ՀՐԱՎԻՐՄԱՆ 2019թ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի պահանջներով և համայնքի ավագանու կանոնակարգով

ԱՐԱՐԱՏ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. 2019թ.-ին համայնքի ավագանու հերթական նիստերը հրավիրել

2019թ. հունվարի 18-ին
2019թ. մարտի 22-ին
2019թ. մայիսի 24-ին
2019թ. հուլիսի 24-ին
2019թ. սեպտեմբերի 24-ին
2019թ. նոյեմբերի 22-ին
2019թ. դեկտեմբերի 13-ին

3. Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածի, համայնքի ղեկավարը կամ նրա պաշտոնակատարը՝ իր կամ ավագանու անդամների՝ օրենքով սահմանված թվի առնվազն մեկ երրորդի նախաձեռնությամբ, անհրաժեշտության դեպքում, կարող է հրավիրել ավագանու արտահերթ նիստ:

ԿՈՂՄ (9)

ավագանու անդամներ՝

1. ԱԶԱՏ ՀԱԿՈԲՅԱՆ _____
2. ԱՆԴՐԱՆԻԿ ՓԱՆՈՍՅԱՆ _____
3. ԱԼԵՔՍԱՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ _____
4. ԱՆԴՐԵՅ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ _____

5. ԱՐՄԵՆ ՀԱԿՈԲՅԱՆ _____

6. ԳՈՀԱՐԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ _____

7. ԶԻՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ _____

8. ՀԱՅԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ _____

9. ՌՈՄԱ ԱՌՈՒՍՏԱՄՅԱՆ _____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ _____ ՀԱՅԿ ՀԱՅԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արարատի քաղաքային համայնք,
ք. Արարատ, Շահումյան 34, հեռ. /0238/4-47-47, էլ. փոստ՝ ararat.ararat@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ
<<23>> ՆՈՅԵՄԲԵՐ 2018 թվականի N 45-Ն

ԱՐԱՐԱՏ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ԹԻՎ 1, 2 ԵՎ 3 ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ ՀՈԱԿ-ՆԵՐ ՀԱՃԱԽՈՂ ԵՐԵԽԱՆԵՐԻ 2019Թ. ՀԱՄԱՐ ԳԱՆՁՎՈՂ ԾՆՈՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 19-րդ, 38-րդ հոդվածի 2-րդ կետերով և համայնքի ավագանու կանոնակարգով.

ԱՐԱՐԱՏԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. 2019թ-ի համար Արարատ քաղաքի թիվ 1, 2 և 3 մանկապարտեզ ՀՈԱԿ-ներ հաճախող երեխաների ամսական ծնողական վճար սահմանել 3500 (երեք հազար հինգ հարյուր) դրամ՝ Արարատ քաղաքային համայնքի երեխաների համար, 5000 (հինգ հազար) դրամ՝ Արարատ քաղաքի հարակից համայնքների երեխաների համար:

ԿՈՂՄ (7)

ավագանու անդամներ՝

1. ԱԶԱՏ ՀԱԿՈԲՅԱՆ
2. ԱՆԴՐԱՆԻԿ ՓԱՆՈՍՅԱՆ
3. ԱԼԵՔՍԱՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ
4. ԱՆԴՐԵՅ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
5. ԳՈՀԱՐԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
6. ԶԻՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
7. ՌՈՄԱ ԱՌՈՒՍՏԱՄՅԱՆ

ԴԵՄ (2)

1. ՀԱՅԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ

2. ԱՐՄԵՆ ՀԱԿՈԲՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀԱՅԿ ՀԱՅԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արարատի քաղաքային համայնք,
ք. Արարատ, Շահումյան 34, հեռ. /0238/4-47-47, էլ. փոստ՝ ararat.ararat@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ
<<23>> ՆՈՅԵՄԲԵՐ 2018 թվականի N 46-Ն

<<ՂԱԶԱՐՈՍ ՍԱՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ-ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԱՐՎԵՍՏԻ ԴՊՐՈՑ>> ՀՈԱԿ ՀԱՃԱԽՈՂ ՍԱՆԵՐԻ 2019Թ. ՀԱՄԱՐ ԳԱՆՁՎՈՂ ԾՆՈՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 19-րդ, 38-րդ հոդվածի 2-րդ կետերով և համայնքի ավագանու կանոնակարգով.

ԱՐԱՐԱՏԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. 2019+թ-ի համար «Ղազարոս Սարյանի անվան միջնակարգ-մասնագիտական արվեստի դպրոց» ՀՈԱԿ հաճախող երեխաների տարեկան ծնողական վճարներ սահմանել ներքոհիշյալ չափերով.

1. Դաշնամուր և լարային գործիքներ I – VII դասարանների համար - 40000դրամ

VIII - XI դասարանների համար - 65000դրամ

2. Ակորդեոնի բաժին I – V դասարանների համար - 25000դրամ

3. Նկարչական բաժին I -- V դասարանների համար - 20000դրամ

4. Պարի բաժին - 20000դրամ

5. Քանոն՝ պետ.պատվերից դուրս սովորող երեխաների համար

I -- V դասարանների համար - 40000 դրամ

VI -IX դասարանների համար - 65000դրամ

ԿՈՂՄ (9)

ավագանու անդամներ՝

1. ԱԶԱՏ ՀԱԿՈԲՅԱՆ _____

2. ԱՆԴՐԱՆԻԿ ՓԱՆՈՍՅԱՆ _____

3. ԱԼԵՔՍԱՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ _____

4. ԱՆԴՐԵՅ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ _____

5. ԱՐՍԵՆ ՀԱԿՈԲՅԱՆ _____

6. ԳՈՀԱՐԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ _____

7. ԶԻՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ _____

8. ՀԱՅԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ _____

9. ՌՈՄԱ ԱՌՈՒՍՏԱՄՅԱՆ _____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ ՀԱՅԿ ՀԱՅԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արարատի քաղաքային համայնք,
ք. Արարատ, Շահումյան 34, հեռ. /0238/4-47-47, էլ. փոստ՝ ararat.ararat@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ
<<23>> ՆՈՅԵՄԲԵՐ 2018 թվականի N 47-Ն

ԱՐԱՐԱՏ ՔԱՂԱՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ԲՆԱԿԵԼԻ ՇԵՆՔԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺՆԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՊԱՐՏԱԴԻՐ ՆՈՐՄԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄՆ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ 2019թ. ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՎՃԱՐՆԵՐԻ ՉԱՓԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Արարատ քաղաքում աղբահանության և սանմաքրման հետ կապված հարցերը կարգավորվում են <<Աղբահանության և սանիտարական մաքրման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով, իսկ շենքերի սպասարկման հարցերը կարգավորվում են <<Բազմաբնակարան շենքերի կառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի տեղական ինքնակառավարման մարմիններին վերաբերող մասով: <<Աղբահանության և սանմաքրման>> մասին ՀՀ օրենքով սահմանված է աղբահանության վճարի դրույքաչափերը, վճարողների իրավունքներն ու պարտականությունները, վճարման կարգը, պատասխանատվությունը չվճարելու, ինչպես նաև այդ ուղղությամբ տեղական ինքնակառավարման մարմինների իրավունքներն ու պարտականությունները:

Օրենքը սահմանում է, որ աղբահանությունը վճարովի է: Աղբահանության վճարը համայնքի ավագանու կողմից սահմանված չափով համայնքի բյուջե գանձվող պարտադիր գանձույթ է, իսկ սանիտարական մաքրման աշխատանքները իրականացվում են համայնքային բյուջեի հաշվին:

Աղբահանության վճարողներ են համարվում բնակելի շինության սեփականատերեր համարվող կամ որևէ այլ իրավունքով այդ գույքը տիրապետող ֆիզիկական և իրավաբանական անձինք, հիմնարկները, պետական և տեղական ինքնակառավարման մարմինները, գույքի վարձակալները:

Աղբահանության վճարի չափը օրենքով սահմանված է՝ կենցաղային աղբի համար յուրաքանչյուր բնակչի համար առավելագույնը 400 դրամ կամ ըստ բնակելի շինության բնակարանի ընդհանուր մակերեսի մեկ քառակուսի մետրի համար առավելագույնը 25 դրամ: Սահմանված են նաև ոչ կենցաղային և խոշոր եզրաչափի աղբի տեղափոխման դրույքաչափերը: Առաջնորդվելով նշված օրենքների պահանջներով համայնքի ավագանին պետք է սահմանի աղբահանության վճարների չափը: Ավագանին <<Բազմաբնակարան շենքերի կառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան պետք է սահմանի նաև բազմաբնակարան շենքերի սպասարկման վճարի չափը, որը պետք է վճարի բազմաբնակարան շենքի ընդհանուր բաժնային սեփականության տերը՝ իր բաժնին համաչափորեն մասնակցելով պարտադիր նորմերի պահանջների կատարմանն ուղղված ծախսերին՝ հակահրդեհային, սանիտարական, քաղաքաշինական, կոմունալ սպասարկման ներշենքային կոմունիկացիաներում առաջացած վթարների վերացմանը, վնասված տանիքների նորոգման համար ասբոսալիկների հատկացմանը, շքամուտքերի դռների լուսամուտների հետ կապված հարցերի կարգավորմանը:

Առաջնորդվելով նշված օրենքների պահանջներով համայնքի ավագանու քննարկմանն են ներկայացվում հետևյալ առաջարկությունները՝

1. 2019թ.–ին յուրաքանչյուր բնակչի համար կենցաղային աղբի աղբահանության համար սահմանել ամսական 190 դրամ:

2. Ոչ կենցաղային և խոշոր եզրաչափի աղբի համար ըստ ծավալի 1խմ աղբի համար սահմանել 3000 դրամ, ըստ զանգվածի 1տ աղբի համար սահմանել 5000 դրամ:
3. Բազմաբնակարան բնակելի շինության պարտադիր նորմերի կատարումը ապահովելու նպատակով շինության նկատմաբ սեփականության իրավունք ունեցող անձանց զբաղեցրած ընդհանուր մակերեսի յուրաքանչյուր քառակուսի մետրի համար ամսեկան սահմանել 10/տասը/ դրամ:
Ղեկավարվելով <<Բազմաբնակարան շենքերի կառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի <<Աղբահանության և սանիտարական մաքրման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 1-ին կետի, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 18-րդ, 19-րդ և 20-րդ կետերի, 38-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջներով, ինչպես նաև համայնքի ավագանու Կանոնակարգով.

ԱՐԱՐԱՏԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Արարատ քաղաքում հաշվառում ունեցող և /կամ/ բնակվող յուրաքանչյուր բնակչի համար կենցաղային աղբահանության վճարի չափը 2019թ.-ի համար սահմանել ամսական 180 /մեկ հարյուր ութսուն/ դրամ:

2. Ոչ կենցաղային և խոշոր եզրաչափի աղբի համար

ա/ ըստ ծավալի՝ մեկ խորանարդ մետր աղբի համար սահմանել 3000 /երեք հազար/ դրամ

բ/ ըստ զանգվածի՝ մեկ տոննա աղբի համար սահմանել 5000 /հինգ հազար/ դրամ

3. 2019թ.-ի համար <<Արարատ քաղաքի կոմունալ ծառայություն>> ԲՀ-ի կողմից բազմաբնակարան բնակելի շենքերի ընդհանուր բաժնային սեփականության պահպանման պարտադիր նորմերի կատարումը ապահովելու նպատակով սահմանել ամսական 7 /յոթ/ դրամ վճար՝ շինության նկատմամբ սեփականության իրավունք ունեցող անձանց զբաղեցրած ընդհանուր մակերեսի յուրաքանչյուր քառակուսի մետրի համար:
4. Համայնքի ղեկավարին՝ աշխատակազմի համապատասխան մասնագետների միջոցով մշակել բնակիչների ու իրավաբանական անձանց հետ կնքվելիք 2019թ. պայմանագրի օրինակելի ձևը, հետևել դրանց կնքման գործընթացին և այն գործողության մեջ դնել 2019թ.-ի հունվարի 1-ից:

ԿՈՂՄ (7)

ավագանու անդամներ՝

1. ԱԶԱՏ ՀԱԿՈԲՅԱՆ _____
2. ԱՆԴՐԱՆԻԿ ՓԱՆՈՍՅԱՆ _____
3. ԱԼԵՔՍԱՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ _____

4. ԱՐՍԵՆ ՀԱԿՈԲՅԱՆ _____

5. ԳՈՀԱՐԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ _____

6. ԶԻՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ _____

7. ՌՈՄԱ ԱՌՈՒՍՏԱՄՅԱՆ _____

ԴԵՄ (2)

1. ԱՆԴՐԵՅ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ _____

1. ՀԱՅԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ _____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ _____ ՀԱՅԿ ՀԱՅԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արարատի քաղաքային համայնք,
ք. Արարատ, Շահումյան 34, հեռ. /0238/4-47-47, էլ. փոստ՝ ararat.ararat@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ
<<23>> ՆՈՅԵՄԲԵՐ 2018 թվականի N 48-Ն

ԱՐԱՐԱՏԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2019 Թ. ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի պահանջով, ինչպես նաև համայնքի ավագանու Կանոնակարգով

ԱՐԱՐԱՏԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ

ՈՐՈՇՈՒՄ Է՝

Արարատի քաղաքային համայնքի ղեկավարի աշխատավարձը 2019թ. -ի համար սահմանել ամսեկան 270000 /երկու հարյուր յոթանասուն հազար/ դրամ:

ԿՈՂՄ (8)

ավագանու անդամներ՝

1. ԱԶԱՏ ՀԱԿՈԲՅԱՆ
2. ԱՆԴՐԱՆԻԿ ՓԱՆՈՍՅԱՆ
3. ԱՆԴՐԵՅ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
4. ԱՐՍԵՆ ՀԱԿՈԲՅԱՆ
5. ԳՈՀԱՐԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
6. ԶԻՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
7. ԱԼԵՔՍԱՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ
8. ՌՈՄԱ ԱՌՈՒՍՏԱՄՅԱՆ

ՁԵՌՆՊԱՀ (1)

ՀԱՅԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ՝ ՀԱՅԿ ՀԱՅԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արարատի քաղաքային համայնք,
ք. Արարատ, Շահումյան 34, հեռ. /0238/4-47-47, էլ. փոստ՝ ararat.ararat@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

<<23>> ՆՈՅԵՄԲԵՐ 2018 թվականի N 49

2019Թ. ՀԱՄԱՐ ԱՐԱՐԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ, ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետի պահանջով, ինչպես նաև համայնքի ավագանու կանոնակարգով.

ԱՐԱՐԱՏԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.Հաստատել Արարատի համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածքը 2019թ.-ի համար: /Հավելված 1, կցվում է/:

2. Հաստատել Արարատի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը 2019թ.-ի համար: /Հավելված 2, կցվում է/:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀԱՅԿ ՀԱՅԿՅԱՆ

Հավելված N 1

Հաստատված է համայնքի ավագանու
2018թ. նոյեմբերի 23-ի թիվ 49 որոշմամբ

ԿԱՌՈՒՑՎԱԾՔ
ԱՐԱՐԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
2019թ.
Կառուցվածքային ստորաբաժանումներ

1. Ֆինանսատնտեսական և գանձումների բաժին
2. Ներքին աուդիտի բաժին

Առանձնացված ստորաբաժանումներ

1. Սոցիալական աջակցության Արարատի տարածքային բաժին
2. ՔԿԱԳ Արարատի տարածքային բաժին

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ.ՀԱՅԿՅԱՆ

Հավելված N2
Հաստատված է համայնքի ավագանու
2018թ. նոյեմբերի 23-ի թիվ 49 որոշմամբ

ԱՐԱՐԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ 2019թ.

Աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը՝ 52 հոգի

ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ	ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ (ՀՀ հազ. դրամ)
Համայնքի ղեկավար	1	270,0
ՀԱՅԵՑՈՂԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ		
Համայնքի ղեկավարի տեղակալ	1	206,0
Համայնքի ղեկավարի խորհրդական	2	173,0
Համայնքի ղեկավարի օգնական	1	160,0
Համայնքի ղեկավարի ռեֆերենտ	1	90,00
ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐ		
Աշսատակազմի քարտուղար /1.1-1/	1	219,0
Ֆինանսատնտեսական և գանձումների բաժին		
Բաժնի պետ /2.1-1/	1	196,0
Բաժնի պետի տեղակալ /2.2-1/	1	187,0
Գլխավոր մասնագետ /2.3-1/	1	145,0
Գլխավոր մասնագետ /գլխավոր հաշվապահ/ /2.3-2/	1	145,0
Առաջատար մասնագետ /3.1-1/	1	123,0
1-ին կարգի մասնագետ /3.2-1/	1	117,0
1-ին կարգի մասնագետ /3.2-2/	1	117,0
2-րդ կարգի մասնագետ / 3.3-1/	1	110,0
Ներքին աուդիտի բաժին		
Բաժնի պետ /2.1-3/	1	196,0
Առաջատար մասնագետ-աուդիտոր /3.1-5/	1	123,0
Աշխատակազմ		
Գլխավոր մասնագետ /2.3-4/	1	145,0
Գլխավոր մասնագետ / 2.3-5/	1	145,0
Գլխավոր մասնագետ /2.3-6/	1	145,0
Առաջատար մասնագետ /3.1-2/	1	123,0
Առաջատար մասնագետ /3.1-3 /	1	123,0
2-րդ կարգի մասնագետ /3.3-2/	1	110,0
Սոցիալական աջակցության Արարատի տարածքային բաժին առանձնացված ստորաբաժանում		

Բաժնի պետ /1.3-1/	1	256.623
Գլխավոր մասնագետ - գլխավոր հաշվապահ /2.3-8/	1	181.885
Գլխավոր մասնագետ-ադմինիստրատոր. /2.3-7/	1	181.885
Գլխավոր մասնագետ / 2.3-9/	1	181.885
Առաջատար մասնագետ /3.1-4/	1	133.603
ՔԿԱԳ Արարատի տարածքային բաժին		
Բաժնի պետ /1.3-2/	1	256,623
1-ին կարգի մասնագետ /3.2-3/	1	133,603
ՏԵԽՊԱՍԱՐԿՄԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄ		
Համակարգչային տեխնիկայի և ինտերնետ կապի սպասարկող	1	110,0
Քարտուղարուհի	1	108,0
Գործավար-օպերատոր	4	85,0
Տնտեսվար	1	100,0
Վարորդ	1	150,0
Հավաքարար	2	85,0
Էլեկտրիկ	1	77,904
ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐ		
Հաշվապահ	1	81,0
Գանձապահ	1	81,0
Օպերատոր	1	81,754
Գանձող	8	77,0

ԿՈՂՄ ()

ավագանու անդամներ՝

1 ԱԶԱՏ ՀԱԿՈԲՅԱՆ

2 ԱՆԴՐԱՆԻԿ ՓԱՆՈՍՅԱՆ

3 ԱՆԴՐԵՅ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

4 ԱՐՄԵՆ ՀԱԿՈԲՅԱՆ

5 ԳՈՀԱՐԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

6 ԶԻՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

7 ՌՈՄԱ ԱՌՈՒՍՏԱՄՅԱՆ

ՁԵՌՆՊԱՀ (2)

1. ԱԼԵՔՍԱՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ _____

2. ՀԱՅԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ _____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ _____ ՀԱՅԿ ՀԱՅԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արարատի քաղաքային համայնք,
ք. Արարատ, Շահումյան 34, հեռ. /0238/4-47-47, էլ. փոստ՝ ararat.ararat@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ
<<23>> ՆՈՅԵՄԲԵՐ 2018 թվականի N 50

2019Թ. ՀԱՄԱՐ «ԱՐԱՐԱՏ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԿՈՄՈՒՆԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ» ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետի պահանջով, ինչպես նաև համայնքի ավագանու կանոնակարգով.

ԱՐԱՐԱՏԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.Հաստատել «Արարատի քաղաքային կոմունալ ծառայություն» բյուջետային հիմնարկի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը 2019թ.-ի համար: / Հավելված 1, կցվում է/:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀԱՅԿ ՀԱՅԿՅԱՆ

Հավելված N1

Հաստատված է համայնքի ավագանու
2018 թ. Նոյեմբերի 23-ի թիվ 50 որոշմամբ

«ԱՐԱՐԱՏ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԿՈՄՈՒՆԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ» ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ 2019թ.

Հ/Հ	ՊԱՇՏՈՆԸ	ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ	ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ (ՀՀհազ.դրամ) I կիսամյակ	ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ (ՀՀհազ.դրամ) II կիսամյակ	ԱՇԽԱՏԱՎԱՐՁ (ՀՀհազ.դրամ) I կիսամյակ	ԱՇԽԱՏԱՎԱՐՁ (ՀՀհազ.դրամ) II կիսամյակ	ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ ՉԱՓԸ /ՀՀ հազ. դրամ/
1	2	3	4	5	6	7	8
1	Տնօրեն	1	180000	180000	1080000	1080000	2160000
2	Ինժեներ-մեխանիկ	1	170000	170000	1020000	1020000	2040000
3	Հաշվապահ	1	130000	130000	780000	780000	1560000
4	Տնօրենի օգնական	1	125000	125000	750000	750000	1500000
5	Կադրերի գծով քարտուղար	1	110000	110000	660000	660000	1320000
6	Գործավար	1	92000	92000	552000	552000	1104000
7	Բրիգադիրներ	2	170000	170000	1020000	1020000	2040000
8	Էլեկտրիկ	1	110000	110000	660000	660000	1320000
9	Զոդող- վարպետ	1	150000	150000	900000	900000	1800000
10	Վարպետ կոյուղու	1	200000	200000	1200000	1200000	2400000
11	Վարպետ	1	80000	80000	480000	480000	960000
12	Վարորդ աղբատար մեքենայի	1	160000	160000	960000	960000	1920000
13	Վարորդ մեխանիզատոր	1	150000	150000	900000	900000	1800000
14	Վարորդ ԳԱԶ ավտոմեքենայի	2	300000	300000	1800000	1800000	3600000
15	Վարորդ ԶԻԼ ավտոմեքենայի	1	150000	150000	900000	900000	1800000
16	Վարորդ ջրցանի	1	150000	150000	900000	900000	1800000
17	Վարորդ գազելի	1	120000	120000	720000	720000	1440000
18	Բանվոր աղբաթափի	6	960000	960000	5760000	5760000	11520000
19	Բանվոր աղբաթափի	3	510000	510000	3060000	3060000	6120000
20	Հավաքարար գրասենյակի	1	85000	85000	510000	510000	1020000
21	Հավաքարար	32	2720000	2720000	16320000	16320000	32640000
22	Կանաչապատման բանվոր (8 ամիս)	8	760000	760000	3040000	3040000	6080000
23	Փականագործ	1	80000	80000	480000	480000	960000

24	Փականագործ ավտոմեքենայի	1	72751	72751	436506	436506	873012
25	Դռնապան	1	85000	85000	510000	510000	1020000
26	Պահեստապետ	1	85000	85000	510000	510000	1020000
27	Հյուսն	1	80000	80000	480000	480000	960000
28	Որմնադիր	1	110000	110000	660000	660000	1320000
29	Վարպետ (տանիք վերանորոգող)	1	85000	85000	510000	510000	1020000
30	Աղբավայրի պահակ	3	218253	218253	1309518	1309518	2619036
31	Աղբավայրի բանվոր	4	291004	291004	1746024	1746024	3492048
Ընդամենը		83	8689008	8689008	50614048	50614048	101228096

2019թ.-ի տոնական և հիշատակի օրերի համար վճարվող գումարը կազմում է՝ 2.000.0 դրամ

ԿՈՂՄ (7)

ավագանու անդամներ՝

1. ԱԶԱՏ ՀԱԿՈԲՅԱՆ
2. ԱՆԴՐԱՆԻԿ ՓԱՆՈՍՅԱՆ
3. ԱԼԵՔՍԱՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ
4. ԱՆԴՐԵՅ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
5. ԳՈՀԱՐԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
6. ԶԻՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
7. ՌՈՄԱ ԱՌՈՒՍՏԱՄՅԱՆ

ՁԵՌՆՊԱՀ (1)

1 ՀԱՅԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԴԵՄ (1)

1. ԱՐՍԵՆ ՀԱԿՈԲՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀԱՅԿ ՀԱՅԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արարատի քաղաքային համայնք,
ք. Արարատ, Շահումյան 34, հեռ. /0238/4-47-47, էլ. փոստ՝ ararat.ararat@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ
<<23>> ՆՈՅԵՄԲԵՐ 2018 թվականի N 51-Ն

ԱՐԱՐԱՏ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2019Թ. ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 18-րդ, 38-րդ հոդվածի 2-րդ կետերով, «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներով, ինչպես նաև համայնքի ավագանու կանոնակարգով.

ԱՐԱՐԱՏԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Արարատ քաղաքային համայնքում 2019թ. համար սահմանել տեղական տուրքերի և վճարների հետևյալ դրույքաչափերը՝

1.1 Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների /այդ թվում՝ ոչ հիմնական/ շինարարության, վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման, բարեկարգման աշխատանքները /բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի/ իրականացնելու նպատակով շինարարության թույլտվության, իսկ ոչ հիմնական շինարարությունների մասով՝ տեղադրման թույլտվության համար, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների /ներառյալ՝ ոչ հիմնական/ շինարարության թույլտվության համար տեղական տուրք սահմանել՝

ա. հիմնական օբյեկտների համար՝ մինչև 300մ^2 ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի /այդ թվում՝ այգեգործական /ամառանոցային/ տների, ինչպես նաև մինչև 200մ^2 ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար – 15,0 հազ. դրամ, այլ օբյեկտների համար՝ 201մ^2 մինչև 500մ^2 - 30,0 հազ. դրամ

501 մ^2 մինչև 1000 մ^2 - 50,0 հազ. դրամ

1001մ^2 մինչև 3000 մ^2 - 50,0 հազ. դրամ

3001մ^2 և ավելի - 100,0հազ. դրամ

բ. ոչ հիմնական շինությունների տեղադրման համար /մինչև 20 մ^2 ընդհանուր մակերես ունեցող օբյեկտներ/ - 3,0 հազ. դրամ, 20 մ^2 և ավելի մակերես ունեցող օբյեկտների համար - 5,0 հազ. դրամ:

1.2 Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման աշխատանքների /բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի/ համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով չի նախատեսվում կցակառույցների, վերակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների /այդ թվում՝ ստորգետնյա/ հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն - 3,0 հազ. դրամ:

1.3 Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար - 5,0 հազ. դրամ:

1.4 Համայնքի տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների արտադրանքի վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանել.

- մինչև 26քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում - 45000 դրամ
- 26քմ-ից մինչև 50քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում - 5500 դրամ
- 51քմ-ից մինչև 100քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում – 7000 դրամ
- 101քմ-ից մինչև 200քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում – 10500 դրամ
- 201քմ-ից մինչև 500քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում – 13000 դրամ
- 501քմ-ից ավելի ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում – 23000 դրամ

1.5 Համայնքի տարածքում ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանել

- մինչև 26քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում - 3000դրամ
- 26քմ-ից մինչև 50քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում - 5500 դրամ
- 51քմ-ից մինչև 100քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում – 7000 դրամ
- 101քմ-ից մինչև 200քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում – 10500 դրամ
- 201քմ-ից մինչև 500քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում – 13000 դրամ
- 501քմ-ից ավելի ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում – 23000 դրամ

1.6 Համայնքի վարչական տարածքում իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար յուրաքանչյուր օրվա համար 175 դրամ՝ 1քմ-ի համար:

1.7 Համայնքի տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, բաղնիքներին /սաունաներին/ և խաղատներին ժամը 24^{00} -ից հետո աշխատելու թույլտվության համար տեղական տուրքը օրացուցային տարվա համար սահմանել.

ա. առևտրի օբյեկտների համար - 25,0 հազ. դրամ

բ. հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար - 50,0 հազ. դրամ

գ. բաղնիքների /սաունաների/ համար - 200,0 հազ. դրամ

դ. խաղատների կազմակերպման համար - 500,0 հազ. դրամ

ե. շահումով խաղերի կազմակերպման համար – 250,0 հազ. դրամ

զ. վիճակախաղերի կազմակերպման համար - 100,0 հազ. դրամ

1.8 Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանել՝

ա/ ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս/ արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար – 1,0 հազ. դրամ;

բ/ թունդ ալկոհոլային /սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար – 1750 դրամ;

գ/ այլ արտաքին գովազդի համար - 750 դրամ;

դ/ դատարկ գովազդային վահանակների համար - 187,5դրամ:

1.9 Համայնքի տարածքում մարդատար տաքսու /բացառությամբ երթուղային տաքսիների ծառայություն իրականացնելու թույլտվության համար/ տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել 5,0 հազ. դրամ՝ յուրաքանչյուր մեքենայի համար:

1.10 Համայնքի տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և /կամ/ սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել 100,0 հազ. դրամ:

1.11 Խանութներում, կրպակներում տեխնիկական հեղուկների վաճառի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել 30,0 հազ. դրամ:

1.12 Համայնքի տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առուվաճառքի թույլտվության համար տեղական տուրք ընթացիկ տարվա համար սահմանել - 50,0 հազ. դրամ

1.13 Համայնքի տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝

<u>Հիմնական շինությունների ներսում.</u>

- մինչև 26քմ -ի դեպքում - 5000դրամ
- 26քմ-ից մինչև 50քմ դեպքում -5500 դրամ
- 51քմ-ից մինչև 100քմ-ի դեպքում – 10500 դրամ
- 101քմ-ից մինչև 200քմ-ի դեպքում – 15500 դրամ

- 201քմ-ից մինչև 500քմ-ի դեպքում – 20500 դրամ
- 501քմ-ից ավելի դեպքում – 30500 դրամ

<u>Ոչ հիմնական շինությունների ներսում.</u>

- մինչև 26քմ -ի դեպքում - 1000դրամ
- 26քմ-ից մինչև 50քմ -ի դեպքում -1500 դրամ
- 51քմ-ից մինչև 100քմ-ի դեպքում – 2500 դրամ
- 101քմ-ից մինչև 200քմ-ի դեպքում – 4500 դրամ
- 201քմ-ից մինչև 500քմ-ի դեպքում – 8500 դրամ
- 501քմ-ից ավելի դեպքում – 15500 դրամ

1.14 Համայնքի անվանումը ֆիրմային անվանումներում օգտագործելու թույլտվության համար տեղական տուրքը օրացուցային տարվա համար սահմանել 50,0 հազ. դրամ:

2. Արարատ քաղաքային համայնքում 2019թ համար սահմանել տեղական վճարների հետևյալ դրույքաչափերը՝.

2.1 Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական վճար ընթացիկ տարվա համար սահմանել - 1,0 հազ. դրամ:

2.2 Համայնքում կազմակերպված մրցույթներին և աճուրդներին մասնակցելու համար սահմանել տեղական վճար - 3,0 հազ. դրամ:

Հիմք ընդունելով«Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ կետը՝ սույն որոշման 1-ին կետի 1.4-րդ, 1.5-րդ, 1.6-րդ, 1.8-րդ, 1.9-րդ , 1.10-րդ, 1.11-րդ և 1.14-րդ ենթակետերով ընդունված դրույքաչափերի վրա կիրառվել է 0,5 գործակիցը:

ԿՈՂՄ (9)

ավագանու անդամներ՝

1. ԱԶԱՏ ՀԱԿՈԲՅԱՆ _____
2. ԱՆԴՐԱՆԻԿ ՓԱՆՈՍՅԱՆ _____
3. ԱԼԵՔՍԱՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ _____
4. ԱՆԴՐԵՅ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ _____
5. ԱՐՄԵՆ ՀԱԿՈԲՅԱՆ _____
6. ԳՈՀԱՐԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ _____
7. ՋԻՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ _____
8. ՀԱՅԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ _____
9. ՌՈՄԱ ԱՌՈՒՍՏԱՄՅԱՆ _____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ՝ ՀԱՅԿ ՀԱՅԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արարատի քաղաքային համայնք,
ք. Արարատ, Շահումյան 34, հեռ. /0238/4-47-47, էլ. փոստ՝ ararat.ararat@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ
<<23>> ՆՈՅԵՄԲԵՐ 2018 թվականի N 52

ԱՐԱՐԱՏ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ ՄԱՍՈՒՆ ԴԱԴԱՄՅԱՆԻ ԵՎ ՄԱՅԻՍ ՆԱԴԱՐՅԱՆԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով Արարատ քաղաքային համայնքի ավագանու անդամ Մայիս Նադարյանի՝ ավագանու անդամի իրավունքների հետ անհամատեղելի այլ աշխատանքի անցնելու և Սասուն Դադամյանի՝ Արարատ քաղաքային համայնքի ավագանու նիստերի կեսից ավելիին չմասնակցելու հանգամանքները, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետով, 22-րդ հոդվածի 1-ին կետի 6-րդ և 7-րդ ենթակետերով , ինչպես նաև համայնքի ավագանու կանոնակարգով.

ԱՐԱՐԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ

ՈՐՈՇՈՒՄ Է՝

Վաղաժամկետ դադարեցնել Արարատ քաղաքային համայնքի ավագանու անդամներ՝ Մայիս Նադարյանի և Սասուն Դադամյանի լիազորությունները:

ԿՈՂՄ (9)

ավագանու անդամներ՝

1. ԱԶԱՏ ՀԱԿՈԲՅԱՆ
2. ԱՆԴՐԱՆԻԿ ՓԱՆՈՍՅԱՆ
3. ԱԼԵՔՍԱՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ
4. ԱՆԴՐԵՅ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
5. ԱՐՍԵՆ ՀԱԿՈԲՅԱՆ
6. ԳՈՀԱՐԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
7. ԶԻՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
8. ՀԱՅԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ
9. ՌՈՄԱ ԱՌՈՒՍՏԱՄՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀԱՅԿ ՀԱՅԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արարատի քաղաքային համայնք,
ք. Արարատ, Շահումյան 34, հեռ. /0238/4-47-47, էլ. փոստ՝ ararat.ararat@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ
<<23>> ՆՈՅԵՄԲԵՐ 2018 թվականի N 53

ՔԱՂԱՔԱՑԻ ԳԱՌՆԻԿ ՊԱՅՏԱՐՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԸ՝ ԱՌԵՎՏՐԻ ՍՐԱՀԻ ԸՆԴԼԱՅՆՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՏԱՐԱԾՔ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քաղաքացի Գառնիկ Պայտարյանը ք. Արարատ, Աղբյուր Սերոբի փողոց 8/4 շինություն հասցեում / ծածկագիր 03-002-0020-0045/ ունի սեփականության իրավունքով իրեն պատկանող 0,0029 հա մակերեսով հողատարածք և վրան կառուցված առևտրի սրահ: Նշված շինությանը կից դիմային ճակատին զուգահեռ առկա է ազատ տարածք, որը չի օգտագործվում այլ անձանց կողմից:

Քաղաքացի Գառնիկ Պայտարյանը դիմել է համայնքապետարան՝ նշված տարածքը սեփականության իրավունքով, առևտրի սրահի ընդլայնման նպատակով, հողատարածքի կադաստրային արժեքով իրեն օտարելու խնդրանքով:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 08.05.2003թ. թիվ 714-Ն որոշմամբ, Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 66-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետի, 43-րդ հոդվածի 1-ին կետի 3-րդ ենթակետի պահանջներով, և նկատի ունենալով, որ Աղբյուր Սերոբի փողոց 8/4 շինություն հասցեում գտնվող, 03-002-0020-0045 ծածկագիրը կրող, քաղաքացի Գառնիկ Պայտարյանին սեփականության իրավունքով պատկանող առևտրի սրահին հարակից ազատ տարածքը չի գտնվում Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտում, հողամասի նկատմամբ սեփականության իրավունքը չի սահմանափակում այլ անձանց իրավունքները, ինչպես նաև հնարավոր չէ հողամասը որպես առանձին գույքային միավոր օտարել աճուրդային կարգով.

ԱՐԱՐԱՏԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Բավարարել Գառնիկ Ստեփանի Պայտարյանի խնդրանքը և Աղբյուր Սերոբի փողոց 8/4 շինություն հասցեում գտնվող, իրեն սեփականության իրավունքով պատկանող առևտրի սրահին և զբաղեցրած 0,0029 հա մակերեսով հողատարածքին հարակից 0,00117հա մակերեսով ազատ հողատարածքը՝ ընդլայնման նպատակով, սեփականության իրավունքով, հողի կադաստրային արժեքի 100% չափ վճարով, ուղղակի վաճառքի կարգով օտարել նրան՝ Գառնիկ Ստեփանի Պայտարյանին:
2. Պարտավորեցնել քաղաքացուն՝ տարածքում շինարարական աշխատանքները կատարել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և քաղաքաշինական գործող նորմերով:

ԿՈՂՄ (9)

ավագանու անդամներ՝

1. ԱԶԱՏ ՀԱԿՈԲՅԱՆ _____
2. ԱՆԴՐԱՆԻԿ ՓԱՆՈՍՅԱՆ _____
3. ԱԼԵՔՍԱՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ _____
4. ԱՆԴՐԵՅ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ _____
5. ԱՐՄԵՆ ՀԱԿՈԲՅԱՆ _____
6. ԳՈՀԱՐԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ _____
7. ԶԻՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ _____
8. ՀԱՅԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ _____
9. ՌՈՄԱ ԱՌՈՒՍՏԱՄՅԱՆ _____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀԱՅԿ ՀԱՅԿՅԱՆ